

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ն

/Ոչ բնակելի տարածքի վարձակալության/

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան

Երկու հազար քսանչորս թվականի դեկտեմբերի



«ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-ն, այսուհետ՝ «Վարձատու» (պետական ռեզիստորում գրանցման վկայական՝ 01ԱՆ՝003268, գրանցման համար՝ 286.140.00393, գրանցման ամսաթիվ՝ 12.10.1994թ.), ի դեմս գլխավոր գործադիր տնօրեն՝ ՇՈՒՇԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ, ում անունից լիազորագրով հանդես է գալիս «Հայփոստ» ՓԲԸ-ի Իրավական ապահովման և համապատասխանության ծառայության ավագ իրավախորհրդատու, համապատասխանության գծով պատասխանատու՝ Անուշ Հովհաննեսի Սահակյանը (անձնագիր՝ AS0645013, տրված 004-ի կողմից 11.06.2019թ.-ին, հաշվառված՝ ք. Երևան, Արաբկիր 17 փողոց, շենք 27, բն. 8), մի կողմից, և Հայաստանի Հանրապետության, ի դեմս Ներքին գործերի նախարար՝ ԱՐՓԻՆԵ ՄԱՐԳՍՅԱՆԻ, ով գործում է կանոնադրության հիման վրա, և ըստ ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Արա Խորենի Ֆիդանյանի կողմից 12.12.2024թ.-ին տրված թիվ 12/800 լրագորագրի հիման վրա հանդես է գալիս լիազորված անձ՝ ՀՀ քաղաքացի Իսրայել Միերի Սաֆարյանը /ծնված՝ 27.07.1987թ., ՀՕՇ՝ 3707870642, նույնականացման քարտ՝ 005833934, տրված՝ 011-ի կողմից 28.04.2017թ.-ին, հաշվառված՝ Երևան, Կենտրոն, Հանրապետության նրբ., Ցա տուն հասցեում/, այսուհետ «Վարձակալ», մյուս կողմից, միասին այսուհետ՝ «Կողմեր» կնքեցին սույն պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ.

- 1.1. Պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ ՀՀ, Մարզ Վայոց Ձոր, ք. Եղեգնաձոր, Շահումյան փողոց 3 /երեք/ հասցեում գտնվող 728.2 /յոթ հարյուր քսանութ ամբողջ երկու/ ք/մ ընդհանուր մակերեսով անշարժ գույքից 83.77 /ութսուներեք ամբողջ յոթանասուկյոթ/, ք/մ մակերեսով ոչ բնակելի տարածքը, այսուհետ՝ «Անշարժ գույք»:
- 1.2. Անշարժ գույքը պատկանում է Վարձատուին սեփականության իրավունքով, որը հաստատվում է ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 12.09.2008 թվականին տրված թիվ 2576845 սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականով:
- 1.3. Վարձատուն հայտնում է, որ Պայմանագիրը կնքելու պահին Անշարժ գույքը վաճառված, նվիրված, գրավ դրված կամ այլ կերպով օտարված չէ, վեճի առարկա չէ, արգելանքի /կալանքի/ տակ չի գտնվում, ինչը հավաստվում է՝ ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 16.12.2024 թվականին տրված թիվ ՄՏ-16122024-10-0504 միասնական տեղեկանքով:
- 1.4. Անշարժ գույքն օգտագործվելու է ըստ նպատակային նշանակության՝ որպես անձնագրային բաժին:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

2.1. Վարձատուն իրավունք ունի՝

- 2.1.1. Վարձակալից պահանջել Անշարժ գույքն օգտագործել Պայմանագրի պայմաններին և Անշարժ գույքի նշանակությանը համապատասխան,
- 2.1.2. Վարձակալի կողմից Անշարժ գույքի վիճակն էականորեն վատթարացնելու և Պայմանագրի 3-րդ կետով նախատեսված կարգով, չափով և ժամկետներում մեկ տարվա ընթացքում 2 /երկու/ անգամից ավել վարձավճարը վճարելու ժամկետների խախտման դեպքում և երկու ամսվա վարձավճարի չվճարում, նրանից պահանջել վաղաժամկետ լուծել պայմանագիրը,

2.1.3. պահանջել վաղաժամկետ լուծելու Պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե Վարձակալը տարածքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ Անշարժ գույքի նշանակությանն անհամապատասխան,

2.1.4. Պայմանագիրը դադարելուց հետո եթե Վարձակալը չի վերադարձրել Անշարժ գույքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, պահանջել վարձավճար կետանցի ողջ ժամանակահատվածի համար,

2.1.5. իրականացնել ՀՀ գործող օրենսդրությամբ և Պայմանագրով սահմանված կարգով իր այլ իրավունքները:

2.2. Վարձատուն պարտավոր է՝

2.2.1. Անշարժ գույքը Վարձակալին հանձնել 01.01.2025 թվականին /երկու հազար քսանհինգ թվականի հունվարի մեկին/,

2.2.2. Անշարժ գույքը Վարձակալին տրամադրել Պայմանագրի պայմաններին և նշանակությանը համապատասխան,

2.2.3. Անշարժ գույքը Վարձակալին հանձնել դրա բոլոր պատկանելիքներով /առկայության դեպքում/ ու դրան վերաբերող փաստաթղթերով /առկայության դեպքում/,

2.2.4. Վարձակալին նախազգուշացնել Պայմանագրի 1.1-րդ կետում նշված Անշարժ գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին,

2.2.5. մինչև Պայմանագրի կնքման պահը կատարել 1.1-րդ կետում նշված Անշարժ գույքի հետ կապված բոլոր կոմունալ, աղբահանության ծախսերը և հարկային պարտավորությունները,

2.2.6. ոչ ուշ, քան 2 (երկու) ամիս առաջ, Վարձակալին գրավոր տեղեկացնել Անշարժ գույքն ազատելու անհրաժեշտության մասին՝ կապված շենքը հիմնական վերանորոգման կանգնեցնելու կամ քաղաքաշինական նկատառումներով այն քանդելու վերաբերյալ սահմանված կարգով ընդունված որոշումների հետ:

2.3. Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1. պահանջել իր տիրապետմանը և օգտագործմանը հանձնելու Պայմանագրի 1.1-րդ կետով նախատեսված Անշարժ գույքը,

2.3.2. պահանջել Վարձատուից հանձնել համապատասխան Անշարժ գույքը կամ հրաժարվել հանձնված Անշարժ գույքից, եթե Վարձատուն Վարձակալին հանձնել է Պայմանագրի 1.1-րդ կետին չհամապատասխանող Անշարժ գույք, իսկ եթե Անշարժ գույքի համար վճարել է կանխավճար, ապա պահանջել վերադարձնել վճարված գումարը,

2.3.3. Վարձատուի կողմից Պայմանագրի 1.1-րդ կետով նախատեսված Անշարժ գույքը Վարձակալին չհանձնելու դեպքում պահանջել լուծելու Պայմանագիրը,

2.3.4. Պայմանագրի 1.1-րդ կետով նախատեսված Անշարժ գույքն ամբողջությամբ և/կամ մասնակի հանձնել ենթավարձակալության՝ միայն Վարձատուի գրավոր համաձայնության: Նման գործարքներ կատարելն առանց Վարձատուի համաձայնության՝ հիմք է Պայմանագիրը Վարձատուի կողմից միակողմանիորեն լուծելու համար,

2.4. Վարձակալը պարտավոր է՝

2.4.1. ժամանակին մուծել Անշարժ գույքն օգտագործելու համար Պայմանագրի 3-րդ կետում նախատեսված վճարը (Վարձավճարը),

2.4.2. Վարձատուի կողմից 1 /մեկ/ օր առաջ ծանուցում ստանալուց հետո Անշարժ գույքի վիճակը ստուգելու նպատակով Անշարժ գույքը գննելու համար ապահովել Վարձատուի անարգել մուտքը տարածք,

2.4.3. Անշարժ գույքը պահպանել պատշաճ վիճակում և կրել Անշարժ գույքը պահպանելու համար անհրաժեշտ ծախսերը,

2.4.4. Պայմանագրի գործողությունը դադարելուց հետո 3/երեք/ օրվա ընթացքում վարձակալվող Անշարժ գույքը ենթակա է վերադարձման Վարձատուին այն վիճակով, ինչպես հանձնվել է՝ հաշվի առնելով նրա բնականոն մաշվածությունը, ինչպես նաև Վարձատուի գրավոր համաձայնությամբ կատարված անբաժանելի բարելավումները,

2.4.5. Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 10 (տասը) օրվա ընթացքում այլ կազմակերպությունների հետ կնքել համապատասխան պայմանագրեր՝ Անշարժ գույքի

կումուսալ սպասարկումների նպատակով, ենթագետիկ կամ այլ միջոցներով ապահովելու վերաբերյալ և իր հաշվին վճարել Անշարժ գույքի էներգամատակարարման, գազամատակարարման, ջրամատակարարման կումուսալ ծառայությունների մատուցման դիմաց վճարները,

2.4.6. Անշարժ գույքն օգտագործել Պայմանագրի պայմաններին և Անշարժ գույքի նշանակությանը համապատասխան,

2.4.7. Վարձատուին անմիջապես տեղեկացնել Անշարժ գույքի ամեն մի վնասվածքի, վթարի կամ այլ իրադարձության մասին, որը վնաս է հասցրել (կամ սպառնում է հասցնել) Անշարժ գույքին, և ժամանակին ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ վտանգի կանխարգելման համար,

2.4.8. ոչ ուշ, քան 2 (երկու) ամիս առաջ, Վարձատուին գրավոր տեղեկացնել վարձակալված Անշարժ գույքի սպասվելիք ազատման մասին կապված Պայմանագրի վաղաժամկետ լուծման հետ,

2.4.9. իր հաշվին կատարել Պայմանագրի կնքման և դրանցից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը,

2.4.10. Անշարժ գույք տարածքում պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սանիտարահամաճարակային կանոնների, հակահրդեհային անվտանգության կանոնների պահանջները, ինչպես նաև այն բոլոր կանոնները և նորմերը, որոնք գործում են Վարձակալի գործունեության ձևերի ու Անշարժ գույքի նկատմամբ,

2.4.11. իրականացնել ՀՀ գործող օրենսդրությամբ և Պայմանագրով սահմանված կարգով իր այլ պարտականությունները:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ.

3.1. Վարձակալված 83.77 (ութսուներեք ամբողջ յոթանասուներեք) ք/մ մակերեսով ոչ բնակելի տարածքի համար վճարման ենթակա ամսական գումարը (վարձավճարը) կազմում է՝ 125.655 (մեկ հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ գումար՝ ներառյալ օրենքով սահմանված հարկերը:

3.2. Վարձակալը Վարձավճարը վճարում է Վարձատուին բանկային փոխանցման եղանակով, Վարձատուի կողմից տրամադրված <<ԿՈՆՎԵՐՍԻՍԱՆԿ>> ՓԲԸ-ում բացված թիվ 1930003703150800 բանկային հաշվին՝ յուրաքանչյուր ամսվա համար վճարելով մինչև հաջորդ ամսվա 10-ը /տասը/:

3.3. Վարձակալի Պայմանագրի 3.2-րդ կետում նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել Պայմանագրի ընդհանուր գնի 0.5 /գրո ամբողջ հինգ/ տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0.05 /գրո ամբողջ գրո հինգ/ տոկոսից:

3.4. Կողմերի համաձայնությամբ վարձավճարի հաշվարկը սկսվում է 01.01.2025թ.-ից /երկու հազար քսանհինգ թվականի հունվարի մեկից/, այն է Վարձատուի կողմից Անշարժ գույքը Վարձակալին հանձնելու պահից՝ հանձնման-ընդունման ակտի ստորագրման օրվանից:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՍՏԽԱՆԱՆՍՎՈՒԹՅՈՒՆԸ.

4.1. Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գույքային պատասխանատվություն են կրում Պայմանագրով իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

4.2. Տուժանքի (տուգանքի կամ տույժի) վճարումը Կողմերին չի ազատում նրանց վրա դրված պարտականությունները կատարելուց կամ խախտումները վերացնելուց:

4.3. Վարձատուն պատասխանատվություն չի կրում Անշարժ գույքի այն թերությունների համար, որոնք նա նշել է Պայմանագրի կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են եղել Վարձակալին կամ պետք է Վարձակալի կողմից հայտնաբերվելին Անշարժ գույքը գննելիս կամ Անշարժ գույքը վարձակալության ընդունելիս, դրա սարքիությունը ստուգելիս:

4.4. Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե ապացուցեն, որ Պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ անպատշաճ կատարման դեպքերը տեղի են ունեցել անհաղթահարելի ուժի (ֆորս - մաժոր) ազդեցությամբ:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ.

5.1. Պայմանագիրը կնքված է 30.12.2024 թվականին /երկու հազար քսանչորս թվականի դեկտեմբերի երեսունին/ մինչև 31.12.2025թ.-ը /երկու հազար քսանհինգ թվականի դեկտեմբերի երեսունմեկը/ և ուժի մեջ է մտնում սահմանված կարգով Վարձակալի իրավունքները ՀՀ կադաստրի կոմիտեում իրավունքների պետական գրանցման պահից:

5.2. Պայմանագրի ժամկետը լրանալուց առնվազն 2/երկու/ ամիս առաջ Կողմերի գրավոր առարկության բացակայության դեպքում, ինչպես նաև եթե օրենքով սահմանված կարգով Պայմանագիրը չի լուծվում, ապա Պայմանագրի ժամկետը յուրաքանչյուր անգամ համարվում է երկարաձգված նույն պայմաններով 1 /մեկ/ տարի ժամկետով:

5.3. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Պայմանագրի ժամկետը կարող է փոփոխվել:

6. ՎԱՐՁԱԿԱԼԱՄ ԳՈՒՅՔԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԸ.

6.1. Անշարժ գույքից Վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ.

7.1. Պայմանագրի գործողության ժամկետը կարող է դադարել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ ցանկացած ժամանակ:

7.2. Վարձատուի պահանջով Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը՝
7.2.1. Անշարժ գույքն օգտագործում է Պայմանագրի պայմանների կամ դրա նշանակության էական կամ բազմակի խախտումներով,

7.2.2. Էականորեն վատթարացրել է Անշարժ գույքի վիճակը,

7.2.3. Պայմանագրով սահմանված վճարման ժամկետը խախտել է երկու անգամից ավելի, թույլ է տվել Պայմանագրի 3.1-րդ կետով նախատեսված վճարման կետանց:

7.3. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ վեճերի լուծումը հանձնվում է համապատասխան դատարանի քննությանը:

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ.

8.1. Պայմանագիրը դադարում է՝

8.1.1 Կողմերի փոխադարձ համաձայնությամբ,

8.1.2. Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում:

8.2. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքերով:

9. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈւժԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/.

9.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա Վարձակալն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես մեկ ամիս առաջ տեղյակ պահելով Վարձատուին:

10. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ.

10.1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 611-րդ հոդվածի համաձայն՝ Պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանումներում՝ 30 (երեսուն) աշխատանքային օրյա ժամկետում:

10.2. Պայմանագրում փոփոխությունները և լրացումները կատարվում են լրացուցիչ համաձայնագրով:

10.3. Կողմերի անվանման, գտնվելու վայրի, բանկային վավերապայմանների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են եռօրյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին:

10.4. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 4/չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որոնցից մեկը պահվում է Երևան նոտարական գրասենյակում, մեկը ՀՀ Կադաստրի կոմիտե, իսկ մյուս օրինակները տրվում է Կողմերին:

10.5. Պայմանագիրը Կողմերը ընթերցել են նոտարի ներկայությամբ: Պայմանագրի բովանդակությունը բավարարում է Կողմերի պահանջները:

10.6 Կողմերի անվանման, գտնվելու վայրի կամ այլ վավերապայմանների փոփոխման դեպքում Կողմերը պարտավոր են 7 /յոթ/ օրյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցող փոփոխությունների մասին:

10.7. Պայմանագրին կցվում է Վարձակալի կողմից տրվող ծանուցումները և/կամ այլ փաստաթղթերը կամ փոստային առաքանիները ստանալու մասին Հայտարարությունը, որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս կազմող թիվ 2 Հավելված:

10.8 Պայմանագրով կատարված բոլոր գրավոր ծանուցումներն ընդունելի են Կողմերի կողմից, եթե դրանք կատարվել են Պայմանագրի անբաժանելի մաս կազմող թիվ 2 Հավելվածով սահմանված Վարձակալի կողմից հայտարարած փոստային հասցեներով և գլուխ 8-ով սահմանված «Հայփոստ» ՓԲԸ-ի իրավաբանական հասցեով կամ էլեկտրոնային եղանակով հետևյալ էլեկտրոնային փոստի հասցեներով՝

Վարձատու՝ real.estate@haypost.am

Վարձակալ՝ police-construction@mail.ru

10.9. Մենք «Կողմերս» լիովին հասկանում և ընդունում ենք կնքվող պայմանագրի իմաստն ու նշանակությունը, իսկ դրանից բխող և մեզ առնչվող իրավական, գույքային և այլ հետևանքները մեզ ձեռնառու են: Պայմանագրի բոլոր դրույթները բխում են մեր «Կողմերիս» իրական մտադրություններից և այն ստորագրում ենք մեր կամքի ազատ արտահայտմամբ:

10.10 Գնումների դիմաց վճարումներ իրականացնելիս պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Վարձակալը պարտավոր է ապահովել պայմանագրի կողմից նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ:

10.11 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր /տեղեկություններ և տվյալներ/ կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Վարձակալն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Վարձակալը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմից համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Վարձակալի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

10.12 Վարձատուի կողմից ստանձված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Վարձակալը հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:



Վարձատուն համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝
ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:
10.13 Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին
պարտավորություններ առաջացնող գնումների դեպքում պայմանագրով նաժատեսված կողմերի
իրավունքների և պարտականությունների կատարման պայման է այդ գործարքի լիազորված
մարմնի կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

«ՎԱՐՁԱՏՈՒ»՝

«Հայֆոստ» ՓԲԸ

Ք.Երևան, Սարյան 22

Հ/հ 1930003703150800

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ

ՀՎՀՀ՝ 02507464

Հեռ.՝ (010) 514-514

Գլխավոր գործադիր տնօրեն՝



Շուշան Ալեքսանյան

«ՎԱՐՁԱԿԱԼ»՝

Հայաստանի Հանրապետություն, ի դեմս՝ ՀՀ Ոստիկանության պետ-ներքին
գործերի նախարարի տեղակալի լ/ա ԻՍՐԱՅԵԼ ՄՀԵԴԻ ՍԱՏԱՐՅԱՆԻ
ՀՀ Ֆինանսների և Նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ

900011042471

ՀՎՀՀ

02882913

Իսրայել Մաթեդի

Վարձատուի կողմից

լիազորված անձ՝

«Հայֆոստ» ՓԲԸ-ի

Իրավական ապահովման

և համապատասխանության

ծառայության ավագ

իրավախորհրդատու,

համապատասխանության գծով

պատասխանատու՝

Անուշ Հովհաննեսի Սահակյան

Անձնագիր՝ AS0645013,

տրված 004-ի կողմից 11.06.2019թ.-ին

Հաշվառված ք.Երևան, Արաբկիր 17 փող., շենք 27, բն. 8

Անուշ Սահակյան



Նոտարական ակտի կոդ: 545-20241230-37-8654003
Նոտարական ակտի գաղտնագիր: JJ2X98



Երկու հազար քսանչորս թվականի դեկտեմբերի երեսուն պայմանագիրը վավերացված է իմ ՀՀ Երևան նոտարական տարածքի նոտար՝ Ատոմ Գրիգորիի Հայրապետյանիս կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև / իրավաբանական անձ/անձանց/ իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ստուգված են: ՀՀ Քաղ. օ-րի 611 հոդվածի համաձայն սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում նոտարական վավերացման պահից սկսած 30 օրվա ընթացքում :

Գրանցված է գրանցամատյանում N 44683

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասներկու հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար



Ատոմ Գրիգորիի Հայրապետյան

